

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ

Նոր Բրուսիոյ և Նոր Գերմանիոյ .

Այնցեալ տարուան աշխարհահռչակ պատերազմն Բրուսիոյ ընդ Աւստրիոյ՝ հին Գերմանական Դաշնակցութիւնը բոլորովին քակելով և զԱւստրիա անկէ դուրս հանելով, իրաւամբ Գերմանիոյ Նոր անուն կրնայ տալ, իրեն տէրութեանց փոփոխութեանը համար, Բրուսիոյ ալ իր մեծագոյն փոփոխութեանը համար, հանդերձ ընդարձակութեամբ երկրին և ժողովրդեան աւելնալուն: Պատերազմէն առաջ 1865 ին սկիզբը՝ Բրուսիոյ բնակիչք կը համարուէին 19,305,000 . պատերազմէն ետեւ Բրուսիոյ հետ բոլորովին միացան կամ խառնուեցան քանի մը Գերմանական առանձնակ տէրութիւնքն, որք են .

Հանովը Թագաւորութիւն	1,923,492
Հէս կայսրընտիր	747,283
Նասսաւ դքսութիւն	466,014
Փրանքֆորտ ազատ քաղաք	89,837
Հոլշտայն դքսութիւն	554,510
Շլէզուիկ	406,486
Պաւլերայէն մաս մը	32,976
Հէս մեծ դքսութեանէն մաս մը	75,102
	4,295,700

որ բուն Բրուսիոյ բնակչաց հետ կը գումարեն իբրեւ 23,600,700

Դարձեալ Բրուսիոյ հետ միաբանեցան դաշնակցութեամբ ուրիշ տէրութիւնք, և կոչուեցան դաշնակցութիւն Հիւսիսային Գերմանիոյ, և են ասոնք .

Սաքսոնիա Թագաւորութիւն	2,343,994
Սաքս. Վայմար մեծ դքսութիւն	280,201
Սաքս. Մայնինկէն դքսութիւն	178,065
Սաքս. Գոպուրկ-Վոլթա, ն.	164,527
Սաքս. Ալթենպուրկ, ն.	141,839
Մէքլենպուրկ Շվերին մեծ դքսութիւն	552,612
Մէքլենպ. Շթրելից, ն.	99,060
Օլտենպուրկ մեծ դքսութիւն	301,812
Պրուսիոյ դքսութիւն	292,708
Անհալթ դքսութիւն	193,046
Լիպի Տէգմուլ իշխանութիւն	111,336

Լիպի Շաւմպուրկ	31,382
Վալաէք	59,143
Շուարցպուրկ Ռուտոլդաու	73,752
Շուարց. Սոնաէրսհալէն	66,189
Ռայս, երեց տոհմ	43,924
Ռայս, կրտսեր տոհմ	86,472
Ազատ քաղաքքն Համպուրկ	229,941
Լիպպէք	50,614
Պրեմա	104,066
Հէս գաւառ	225,696
	5,630,379

ասոնք Բրուսիոյ հետ՝ որ է

23,600,700

կը գումարեն միանգամայն

29,231,079

Այս դաշնակցութենէ դուրս մնացող տէրութիւնք կ'ըսուին Հարաւային Գերմանիա, և են

Պաւլերա Թագաւորութիւն	4,774,464
Վիւրթեմպերկ Թագաւոր	1,748,328
Պատէն մեծ դքսութիւն	1,429,199
Հէս մեծ դքսութեան մասն	564,475
Լիհտէնշտայն իշխանութիւն	7,994
	8,524,460

Հիւսիսային և Հարաւային, կամ թէ բոլոր Գերմանիոյ բնակչաց թիւն կ'ըլլայ 37,755,539 . և եթէ նոր աշխարհահամար ըլլայ՝ գուցէ աւելի գոտի, հաւասարի կամ անցնի քան զԳաղղիոյ, որ այնցեալ տարի մայիսի վերջը ունէր 38,067,094 բնակիչ:

Իսկ Աւստրիա՝ որ առ այժմ Գերմանիայէ զատ կը սեպուի՝ իր զանազան աշխարհաց և ազգաց մարդաթուով կը կազմէ 32,000,000 հոգի:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Երանրոշքիւն ճովուց: — Զանազան ծովուց միջին ծանրութիւնն և բարեխառնութիւնն է այսպէս .

Հիւսիսային Ատլանտեան ովկիանոս մինչև 50° հիւսիսային լայնութեան . սեպհական ծանրութիւն 1,02664, բաւիսառնութիւն միջին 24°96 .

Հարաւային Ատլանտեան ովկիանոս ինչուան 50° հիւսիսային լայնութեան .